

## «Ամերիա և Lumen moments» գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Վիճակահանություն) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Բանկ) կողմից:
2. Վիճակահանության ներքոգրյալ բոլոր պայմանների պահպանման դեպքում Վիճակահանության մասնակիցը հնարավորություն է ստանում հաղթելու «Lumen moments»-ի լուսանկարահանման 3 նվեր-քարտերից մեկը:
3. Վիճակահանությանը մասնակցելու հնարավորություն կստանան այն անձինք, որոնք 2023թ. սեպտեմբերի 6-ին՝ Երևանի ժամանակով ժամը 13:00-ից սկսած մինչև 2023թ. սեպտեմբերի 12-ը՝ Երևանի ժամանակով ժամը 23:59-ը ներառյալ.
  - կհետևեն «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ինստագրամի պաշտոնական էջին՝ <https://www.instagram.com/ameriabank/>
  - կհավանեն Վիճակահանության անցկացման մասին այս հրապարակումը
  - այս հրապարակման տակ մեկնաբանություն կթողնեն՝ նշելով (tag) ինստագրամյան իրենց ընկերոջը/ընկերներին:
4. Վիճակահանության մասնակցությունն անվճար է:
5. Վիճակահանության արդյունքների ամփոփումը տեղի կունենա ս.թ. սեպտեմբերի 13-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում Ամերիաբանկի ինստագրամյան պաշտոնական էջի սթորի բաժնում՝ էկրանի տեսագրության (screen recording) միջոցով:
6. Վիճակահանության արդյունքների ամփոփման հստակ օրվա և ժամի մասին կտեղադրվի սթորի հայտարարություն «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ինստագրամի պաշտոնական էջում:
7. Վիճակահանության հաղթող կճանաչվեն այն մասնակիցները, ում անունները պատահականության սկզբունքով՝ Comment picker

գործիքի միջոցով կընտրվեն վիճակահանության ամփոփման ընթացքում:

8. Հաղթող մասնակիցների հետ Բանկը լրացուցիչ կապ կհաստատի՝ նշելով մրցանակի ստացման եղանակը և վայրը:
9. Մրցանակը ստանալու համար հաղթողները պետք է անձամբ մոտենան Բանկի կողմից նշված վայր՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Գովազդային վիճակախաղի կազմակերպիչ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2

Հեռ.՝ 010 561111